ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ապրիլի 15-ի №Ե-121-21 գրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման հավելվածի՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) «Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Աբովյան փողոցի 6-րդ հասցեի սպառման համակարգը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին միացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության, «Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ագաթ-777» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված՝ սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի հիման վրա՝ համաձայն հավելվածի.

2) սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիրը կնքվում է «Սևանի Խ. Աբովյանի

անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից դիմումն առձեռն ներկայացվելու դեպքում՝ անմիջապես, իսկ փոստային կապի միջոցով ներկայացվելու դեպքում՝ դիմումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, «Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ագաթ-777» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
մայիսի 2021թ.